ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արարատի համայնքապետարանը 2025թ. դեկտեմբերի 4-ին ժամը 11:00-ին հայտարարում է Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության մրցույթ: Մրցույթի է ներկայացվում՝

1.Լոտ ծածկագիր 03-013-0561-0105 2.72386 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամաս, մեկնարկային վարձավճարի տարեկան գինը՝ 1330320 ՀՀ դրամ:

Հողամասը տրամադրվում է վարձակալությամբ 10 տարի ժամկետով:

Սահմանված է նախավճար՝ վարձավճարի մեկնարկային գնի 5%-ը, մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, մրցույթային քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով: Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն: Մրցույթի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արարատի համայնքապետարան՝ Արարատի մարզ, Արարատ համայնք, ք. Արարատ, Շահումյան 34: Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:

Արարատի համայնքապետարան /հեռ. 060 88 55 55 /